

«ՄՇԱԿ» ԹԷ ԼՈՒՍԱԻՈՐԶՈՒԿԱՆ ՁԷ՝ ՀԱՅ ԷՒ ՁԷ \* ) .

Տասներկու տարի է որ Մշակի խմբագիր Պ. Գ. Արծրունին ամեն օր կրկնում է թէ «Մշակը կրօն չունի, Լուսաւորչական Հայ չէ, ելն. ելն. Այս և սորանից աւելի անվայել խօսքերով իւր ընթերցողների զահլէն տարած է, որոնք առանց նորա խոստովանութեան էլ շատ վազուց ճանաչել էին գործերիցն, որ Մշակը Լուսաւորչական չէ:

Բայց այսու ամենայնիւ տակաւին մինչ ցարդ «Մշակ» ի ընթերցողներս իբրև Հայ էինք ճանաչում «Մշակ» ին (ոչ թերթին՝ այլ խմբագրողին) և այն ևս իւր ասածովն՝ այնպիսի մի Հայ, որ կարող է ատելով ատել Հայ կրօնը, Հայ եկեղեցին, վնասել նորա կազմակերպութեանը, աղանդ անուանել Հայ ազգի կրօնը, բաժանումն քարոզել, նոր ու աղանդական բեֆօրմներ մտցնելու աշխատել Հայ կրօնի մէջ և դարձեալ Հայ անունով պարծել թէ «Հայ եմ, որովհետև Հայերէն եմ խօսում»: Ահա այս տեսակ Հայերից մին էլ «Մշակ» ին էինք համարում. բայց իվերջոյ Մշակը մեր այսպէս ճանաչումն էլ սխալ հանեց:

«Մշակ» ի ասելով կամ բանաստեղծելով կան տաճիկ Հայեր, պարսիկ Հայեր, քիւրտ Հայեր, եղիդի Հայեր և վերջապէս շատ տեսակ Հայեր, բաւական է որ օրհնեն Հայերէն, և ՀայՏոյնն Հայերէն. այս տեսակ Հայերից մին էլ Մշակին էինք համարում, բայց այս էլ սխալ եղաւ. Մշակն այս ձև հայութիւնն էլ ընդունել իւր մեծապատուութեանը անպատուութիւն համարեց, ներկայ տարւոյս 38 համարով բացարձակ քարոզեց թէ ինքը Հայ չէ. այլ՝ ասորի, ասորի ծագումն ունելով—ասորի Սենեքերիմ թագաւորի հայրասպան որդիներից սերելով Արծրունեաց տոհմն:

Ե՛հ, ի՞նչ վնաս Հայ ազգին որ պ. Արծրունին իրան Հայ չէ համարում, ի՞նչ հարկ կայ գրիչ ձեռք առնել, ժամանակ կորցնել, ասել թէ «Մշակ» Հայ է կամ Հայ չէ, կրօն ունի՞ թէ չունի, մեզ միայն նորա որոմնացանութիւններն, նորա գայթակղեցուցիչ քարոզներն, նորա վնասակար դատողութիւններն հարկադրումեն խօսել, և թէպէտ առողջ միտք ունեցողներ երբէք նորա դատարկ գոռգոռոցներին կարևորութիւն չեն տալիս, նորա քարոզածներ դատարկ տակառի թըխթըխկոցներ են և միայն մանուկներին կարողանում են խաբել՝ երկիւղ պատճառելով. բայց չչեղունք բուն ինչորից:

«Մշակ» Հայ չէ, Հայ ազգին չէ պատկանում, Հայ եկեղեցւոյ շահերն նորան չեն հետաքրքրում, Մշակի համար մի և նոյն է պրահ-

(\*) Այս յօդուածը հրատարակու մենք պատասխանատուութիւնը յօդուածագրի վերայ թողնելով:

ման է մեռել՝ թէ Հայոց Հայրապետ է վախճանել, մի շեյխ են ընտրում թէ մի Հայոց եկեղեցւոյ Պետը՝ մի և նոյն է դարձեալ, Թէպէտ նա երբեմն այնքան հայամտութիւն էր քարոզում, որ քիւրտ, եզդի, պարսիկ, տաճիկ, յոյն և շն, ազգերին էլ հայ էր ճանաչում, նոցա պայերի արեան մէջ հայ արիւն էր խառնած տեսնում, որով և Հայաստանի մէջ բնակած բոլոր ազգաբնակչութիւնը Հայ էր ճանաչում և հրատարակում, բայց այժմ քամին հակառակ կողմից է փչում, սըրտով, գործով կրօնքով և ազգով հայացածներին մաղում, դէն է զըցում, նորանց հայ չէ ճանաչում, իւր յիշեալ համարի առաջնորդող կոմիտէի հետ ինչպէս Վերնագրով յօդուածի մէջ ասում է թէ, «նոյն իսկ Գրիգոր Լուսաւորիչն էլ հայ չէր, օտարազգի էր», Օ՛, ինչ խոր փիլիսոփայութիւն, ինչ հմուտ մարդազննութիւն, ինչ քիմիականութեան սուր հոտառութիւն. Գրիգոր Լուսաւորիչը հայ չէր, օտարազգի էր, ինչքան էլ հայոց շահերը պաշտպանեց, հայոց ազգը լուսաւորեց, հայ չէր, քանի որ նորա պապու պապի պապի պապու, պապու պապի արեան մէջ պարթևական արիւն կար, պարթև էր, օտար էր, հետևաբար օտար էին և Մեծն Ներսէս և Մեծն Սահակ, Վարդան Մամիկոնեան, օտար էր Տրդատ իւր պապի պապերով և իւր թոռան թոռներով, Ահա այս է Մշակի քարոզածն. էլ յառաջ գնա՛ Մշակ, մաղի՛ր հայ ազգը, լուսաւորի՛ր, դուրս հան Արշակունիք, Բագրատունիք, Ռուբինեանք, Արծրունիք, Մամիկոնեանք և շն. հաւատարմութեան բովէն անցնու՛ր, հարկաւ չորս միլիօն ազգի մէջ կրգտնես Հայկի արիւնը, թէ չգտնես, դարձի՛ր օտարներ մաղի՛ր, նոցա մէջ անշուշտ կը գտնես մահաճատական հայ Մղտոյին, բողոքական հայ Ամիրխանեանցին, կաթողիկ հայ՝ գերապայծառ Հասունին, Գու գուցէ հայ ես ճանաչում միայն հայ եկեղեցուց բաժանուածներին, Մաղի՛ր օտարներին, հոգեփոխութեան հաւատով զննի՛ր Հայկի արեան ինքզինեւէ կը գտնես օտարների արեան մէջ, աւելի քրդերի և թիւրքմէնների (Թորգոմական) մէջ, կազմակերպիր նոցանից Մշակի բանակ, գրաւի՛ր նորանցով Հայաստանի և Հայ եկեղեցու սեպհականութիւններն, իբրև հին հայու սեպհականութիւն.

Բայց ընթերցողը գուցէ հարցնէ մեզ թէ Մշակին ինչի՞ն է պէտք կրօնի վերայ գրել, մինչդեռ նա չէ ունումնասիրել կրօնը և չէ ուզում մի որ և է կրօնի դրօշակի տակ մտնել. Մշակին ինչի՞ն է պէտք Հայոց կաթողիկոսական խնդրի վերայ խօսել՝ մինչդեռ նորա գոյութիւնը ազգի համար աւելորդ է համարում, հարկաւ մի նպատակ ունի նա, վասն զի նա՝ Մշակ թաց տեղ քնող չէ. մինչև որ մի ծառի վերայ տասն ընկոյզ շտեմնէ՝ մի քար չի գցում վեր բերելու. Արիշներ էլ հարցնում են թէ, Մշակի նիւթեր պակաս չեն, նա ունի մի ստուար բանակ գրողների, թուղթ մրտողների, թէ գրելու նիւթ էլ չունենայ՝ փառք Աստուծոյ, ահագին բառարան ունի հայհոյելու, հարիւր տարի էլ գրի, զեռ չի պրծնիր, ի՞նչ է պատճառն որ լող չսովորած՝ ջուրն է մանում —

պատմութիւն և կրօն չունումնասիրած՝ քննադատում է, անշուշտ մի փոքրի ցաւ ունի էլի, մի ձու ունի գլորելու. մին ունի հայոց կաթուղիկոս ընտրել տալու, այնպիսի մին՝ որ վերանորոգութիւն մտցնի Հայ եկեղեցու և կրօնի մէջ, Գրեթէ Լուսաւորչին Դէ Կրօն Գրեթէ Ինչպէս ասումէ նոյն առաջնորդող (դէպի անդունդ) յօդուածի մէջ, որպէս զի իւր երես սպիտակացնող Քաֆֆիի. խենթ Ա. արդանի ցնորական երազի իրագործութիւնն իւր աչքով տեսնի, նորա երազած և գուշակած երկու հարիւր տարին երկու հարիւր շաբաթի փոխուի, Հայ Լուսաւորչականներն բաց թողնելով օտարազգի Ա. Գրեթոր Լուսաւորչին, Ամիրխանեանին լսեն, Ա. յո՛ւ, Մշակի նպատակն է Արարատեան դահի վերայ մի Քրգիչոյ, Գագիչոյ կամ Շմուէլ տեսնել. ապա թէ ոչ ինչ կապ ունէր կաթուղիկոսական խնդրի մէջ յառաջ բերել թե « Լուսաւորիչն էլ հայ չէր, օտար ազգի էր », և թէ « հայ եկեղեցուն վերանորոգութիւն է հարկաւոր ժամանակի պահանջման համաձայն » :

Պ. Արծրունի, հէրիք համարենք Ձեզ նման հանաքազութիւն, մի քիչ էլ լրջօրէն խօսինք, ծանր նստինք որ լիար գանք, բայց դու լուրջ խօսելն արհամարհում ես, վնաս չունի, կ'համբերենք քեզ, վարժուած ենք հայհոյանքներդ բանի դեղ չգնելու. միայն հետեւեալ մի քանի հարցումներին պատասխանի՛ր լրջօրէն, առանց քաշքշելու, և ծամածռելու, առանց հայհոյելու. ուրիշ հարց չեմք առաջարկում քեզ, քո ասածների բացատրութիւն եմք ուզում :

« ) Ի՞նչ վերանորոգութիւն ես ուզում մտցնել Հայոց Առաքելական ուղղափառ եկեղեցւոյ մէջ. աշխարհական կաթուղիկոսութիւն, քաղաքական ամուսնութիւն, առեւանգութիւն թէ մի նորաձև աղօթք, երես դէպի արեւմուտքը դէպի Քրիստանիա կամ Ամերիկայ :

բ ) Ի՞նչ տեսակ դպրոց ես ուզում մանկանց կրթութեան համար, և ի՞նչ տեսակ քարոզութիւն եկեղեցական, անկրօնութիւն, դպրոցների մէջ՝ թէ Ձեր « Հայաստանի ճանապարհորդութեան դասախօսութիւնն » եկեղեցու բնի վերայ :

գ ) Ի՞նչ կրօնական գրքերի թարգմանութիւն ես ուզում լինել ժողովրդի մէջ մայրենի լեզուով. Ս. գրքի բողոքականաց կարկատած թարգմանութիւնը, թէ գուրանի թարգմանութիւն հայ լեզուով :

դ ) Հայոց ազգը իւր քրիստոնէական կրօնն ո՞ր կազմակերպեալ եկեղեցուց է սովորել, եթէ Քաղէոս և Քարղուղիմէոս Առաքեալներից չէ ընդունել :

ե ) Եթէ Գրեթոր Լուսաւորիչ օտար պիտի ճանաչեմք, նորա փոխարէն ո՞ւմ համարենք բնիկ հայ և հայութեան պաշտպան, Լօլջի՞ն թէ Ա. օլթերին, գերապայժառ Հասունի՞ն թէ Ամիրխանեանին :

զ ) Քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ քարոզող և տարածող ո՞ր Լատինացին է կամ Յոյն. Աւնիթոսներ թէ չունիթոսներ. բայց հրէայ ասէիր էլի սաղ կրգար :

է) Հայ բողոքականք՝ եթէ իսկապէս չեն միացել մի արդէն յայտնի եղած բողոքական եկեղեցու հետ, ուրեմն նորա ինչո՞վ են հեռացած Հայ եկեղեցուց, և ի՞նչ դաւանութեամբ միացած են բողոքական ազանդին:

Ը) Լուսաւորչական եկեղեցին ի՞նչ լաւ կողմերէ կորցրել, զոր բողոքականք գտել են այժմ և մենք էլ պարտաւոր ենք վերցնել նորանցից այն լաւ լաւ յատկութիւններն, նմանող լինելով նորանց. մեր նախնի Ա. Հարց քարոզածն ուրանալ թէ վնդել Ս. գրքից այն կտորներն, որ ուղղափառութեան հաստատութիւն են:

Ք) Ի՞նչ տեսակ լուսաւորեալ կաթուղիկոս է հարկաւոր Հայ եկեղեցուն. Հայ կրօնի, եկեղեցւոյ և ազգային պատմութեան տեղեակ մի Հայ եկեղեցակա՞ն, թէ Եւրոպայում կամ Ամերիկայում ուսումն առած մի գիտնական պրօֆէսոր, թէ Գերմանիայում դօքտորութեան վկայական ստացող թէև իսպառ անտեղեակ Հայ եկեղեցւոյ վարդապետութեան և Հայ պատմութեան մի խմբագիր:

և ՛) Վերջապէս ազգային ընդհանրական ժողովին ապագայ կաթուղիկոսի օրով աշխարհական պատգամաւոր ո՞վ ես ուզում յառաջ քշել. գիտենք որ դու ցանկութիւն չունիս ներկայ գտնուելու, Հայոց եկեղեցու անցեալն, ներկայն և ապագայն քեզ չեն հետաքրքրում, իհարկէ մին ունիս ի նկատի որ առաջարկես մասնակցել, դա Ամիրխանեանց կ'լինի, որովհետև նա հրաւեր կարդաց Մշակի մէջ թէ՛ «Հայոց կաթուղիկոս թող գայ վիճենք, վերք տանք վերք առնենք, տեսնանք ո՞վ կը յաղթի». այժմ էլի նոյն զուռնան ես փչում: Բայց չէ այդ զուռնային լսող չկայ, Հայեր խօ՞ւրիբից էլ յիմար չե՞ն որ չկարենան ճանաչել և որոշել իրանց մօր քաղցր մկկոցն որսացող գայլի հաստ ու կոպիտ ձայնից:

Մշակ ջան, արեւիդ մատաղ, գլխիդ զուրբան լինի տասներկու տարուան թերթերդ, ասա՛ քո ինչի՞ն է պէտք Հայոց կրօնի վերայ խօսելը, Հայոց եկեղեցու Պետի վերայ առաջնորդող յօդուածներ տպելը, սպասիր ընտրութիւնը լինի պրծնի, դու էլ ներքին կամ մանր լուրերի շարքում երկու տողով ասա «մենք լսեցինք որ հայոց կաթուղիկոս են ընտրել». ինչպէս գրեցիր հանգուցեալ Վեհ. Գէորգ Գ. Կաթուղիկոսի մահացուցակն. Առ այժմ ցտեսութիւն: Չեր եղբօր որդին եմ, բայց Հայ եմ, ո՛չ Ասորի: